## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ԳԵՒՈՐԳԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Գոհունակ սրտով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական օրհնութիւն ենք բերում եւ գնահատանքի Մեր խօսքը՝ մեր Սուրբ Եկեղեցու բարեպաշտ զաւակին:

Մեծարգոյ պրն. Գեւորգեան, ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ ծանօթ ենք Ձեր բազմաբեղուն գործունէութեանը: Ուրախ ենք մեծապէս, որ Դուք արդիւնաւորութեամբ ծառայում էք հայ ոսկերչական արուեստի զարգացմանը՝ արձանագրելով գնահատելի յաջողութիւններ:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ Դուք տարիներ շարունակ ազնիւ յանձնառութիւններով եւ ընծայաբերումներով օգտաշատ ծառայութիւն էք բերում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմին, որպէսզի առաւել կազմակերպուած լինի Ռուսաստանում բնակեալ հայորդեաց համայնքային կեանքը, զօրանր՝ նրանց ազգանուէր եւ եկեղեցասէր ոգին: Այս հաւատքով Դուք ազնիւ մասնակցութիւն բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը, որը նոր՝ լուսաւոր հանգրուան է թեմի պատմութեան մէջ եւ առաւել արդիւնաւոր պիտի դարձնի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սպասաւորութիւնը հաւատաւոր իր հօտին:

Մենք առիթն ենք ունեցել ականատես լինելու նաեւ Ձեր հոգու ջերմ սիրուն ու անհուագ նախանձախնդրութեանը՝ հանդէպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որի պայծառութեանը աւանդ բերելը համարում էք Ձեր հոգու պարտքը: Ձեր աշխատանքով ու ազնիւ հովանաւորութեամբ պատրաստուած Հայրապետական զաւազանը՝ որպէս թանգարանային արժէք, սերնդէ-սերունդ պիտի պատմի Ձեր շնորհի ու վարպետութեան, նաեւ էջմիածնասիրութեան ու եկեղեցասիրութեան մասին:

Մեր Սուրբ Եկեղեցուն ու հարազատ ժողովրդին մատուցած գովարժան ծառայութեանց բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

### ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը Իր հա-

նապաց օրհնութեամբ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ եւ հաւատաւոր Ձեր ընտանիքի անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ ամենայն բարիք:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 773